**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

29 մայիսի 2018 թվական                                        գյուղ Ղարիբջանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 10

29 մայիսի 2018 թվական                                        գյուղ Ղարիբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 29-ի թիվ 5 նիստի հետևյալ օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի սոցիալապես անապահով և ծանր հիվանդ թվով երկու բնակչի դրամական նպաստ տրամադրելու մասին

   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան)

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ղեկավար՝ Մանվել Պողոսյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

կողմ(3)          Դեմ 0)          Ձեռնպահ (0)

Պողոսյան Վարազդատ

Ղազարյան Ղազար

Գևորգյան Դավիթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
29 մայիսի 2018 թվական
գյուղ Ղարիբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11

<29> մայիսի 2018 թվական

գյուղ Ղարիբջանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԲՆԱԿՉԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 19-ի թիվ 7-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ավագանին

***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի սոցիալապես անապահով և ծանր հիվանդ թվով երկու բնակչի տրամադրել դրամական նպաստ՝ ընդամենը 100000 /մեկ հարյուր հազար/ դրամի չափով

1.Հովսեփյան Գագիկ – 50000 /հիսուն հազար/դրամ
2.Հովհաննիսյան Անժիկ- 50000 /հիսուն հազար/դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ղարիբջանյան համայնքի ավագանու անդամներ՝

կողմ 3 (երեք) դեմ 0 ( զրո ) ձեռնպահ 0(զրո)

Վարազդատ Պողոսյան

Ղազար Ղազարյան

Դավիթ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

29 մայիսի 2018 թվական
գյուղ Ղարիբջանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ն**

« 29 » մայիսի 2018 թվական　　　　　　　　　　գյուղ Ղարիբջանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյանի համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 15-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.Ծախսային մասի «Դրամաշնորհներ» բաժնի 4637 հոդվածի 2-րդ եռամսյակի «0» թիվը փոխարինել «100.0 հազար դրամ» թվով /մեկ հարյուր հազար դրամ/, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտներին Սարդարապատի հուշահամալիր շրջագայություն կազմակերպելու համար:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյանի համայնքի ավագանու անդամներ՝**

(կողմ-3) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Վարազդատ Պողոսյան

Ղազար Ղազարյան

Դավիթ Գևորգյան

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի**
**Ղարիբջանյանի համայնքի ղեկավար** **ՄանվելՊողոսյան**

«**29**» մայիսի 2018 թվական
գյուղ Ղարիբջանյան